

Բ Ա Ռ Ա Զ Ն Ն Ո Ւ Թ Ի Կ Ե

ԱՇԽԱՌՀԱԲՈՒ ԼԵԶՈՒՆԻ ՔԱՆԴ ՄԻ ԲԱՌԵՐԸ.

Ծանր, ծանրութիւն. մանր, մանրել. ծունր,
ծնրադրութիւն եւ այլն. — Աշխարհաբառ լե-
զուին մէջ, մանաւանդ տեղ տեղ, սովորու-
թիւն եղած է և տառը աւելցընել այս բառե-
րուս մէջ եւ ըսել, օրինակի համար, ծանր,
ծանրութիւն, ծանրուց. մանր, մանրշիկ, ման-
րել. ծնրադրութիւն եւ այլն: Յայտնի բան է
որ այս աւելքութիւնը պէտք է գուրս ձգել:
Աւելի զարմանալի է ոմանց այսպիսի և մը
աւելցընելը նաեւ ոուս բառին հոլովականնե-
րուն մէջ, որով կըսեն, եւ երբեմն կդրեն,
Ռուսաց կամ Ռուսաց, փոխանակ գրելու Ռու-
սաց. ոուսերեկն՝ փոխանակ ըսելու ոուսերեկն.
Եւ այս սխալին պատճառը շատ գժուար է
գուշակելը:

Ծիծառն եւ Ծիծեռն. — Թէպէտ եւ աւելի
սովորական է գրոց լեզուին մէջ ծիծառն գը-
րութիւր, բայց ծիծեռն գրուածն ալ շատ կը-
գտնուի. անոր համար սխալ չհամարուիր
աշխարհաբառ ծիծեռն կամ ծիծեռնիկ ըսե-
լը, ինչպէս որ սովորութիւն է շատ տեղ:

Ծծումբ. — Ասոր աշխարհաբառը ոմանք կը-
գրեն ծծում, ոմանք ծծում, եւ ոմանք ծըն-
ծում. բայց ուղիղն է ծծումբ ըսելն ու գրելը:

Ծնիլ կամ ծնանիլ. — Ծատ տեղ սովորու-
թիւն է կենդանեաց, եւ մանաւանդ գաղա-
նաց ձադ կամ լակոտ բերելուն ցնկնիլ կամ
ցնիլ ըսելը. այնպէս որ ինչպէս մեռնիլ բա-
ռը պիղծ համարեալ կենդանեաց ըսելը ան-
յարմար կերեւի, եւ սովորութիւն եղած է

նոցա համար գործածել սալիի բառը, այս-
պէս եւ ծնիլ կամ ծնանիլ ըսելը անյարմար կե-
րեւի գաղանաց եւ անսուրը կենդանեաց:
Ասոնք այնպիսի ազգային եւ ռամկական գա-
ղափարներ են որ ըստ ինքեան օգուտ կամ
վնաս չունին լեզուին յստակութեանը. բայց
աշխարհաբառին հարստութիւն կուտան, եւ
ազգային բնաւորութեան կամ սովորութեան
մէկ մասն են, որ իրենց յարգը եւ նշանա-
կութիւնը միշտ կպահեն:

Ծօ. — Այս ռամկական միջարկութեան նը-
ման գործածուած բառին ստուգաբանու-
թիւնը կերեւի Վրաց լեզուին ծէ բառը, որ
ըսել է որդի կամ զաւակ, որպէս նման է եւ
Տաճկաց ողլան կամ ուղան բառը: Խրիմեցիք
եւ Նախիջեւանցիք կըսեն հածէ, այսինքն հա-
ծէ, ինչպէս որ Փոքր Ասիոյ բնակիչներէն
ոմանք կըսեն հածօ, Զմիւռնացիք նաեւ ծա,
իսկ Պօլսեցիք ծօ: Յայտնի է որ այս բառը ինչ
ձեւով եւս լինի՝ գործածելը սաստիկ ռամ-
կութիւն կհամարուի, ինչպէս նաեւ ուրիշ
լեզուաց մէջ ասոր պատասխանող ձայները,
զոր օրինակ՝ իտալերենին մէջ ևեօ կամ չիօ
կանչելը, եւ տաճկերենին ուղան ըսելը. բայց
որովհետեւ գրեթէ ամէն տեղի ռամկաց մէջ
սովորական դարձած բառ է, կարելի է աւել-
լորդ զարդ մը համարիլ աշխարհաբառին
նաեւ այս ծօ տգեղ ու կոշտ կոչականը. ինչ-
պէս որ կգործածուի իգական նշանակու-
թեամբ յա կամ հնայա բառը,

